

ԱՌԲԱՆՈՒՄԻ ՄԵԹՈԴԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ
ՇԱՐԱՀԻՒՍԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

(Շար. տե'ս «Բազմավեյ» 1967, ք. 11-12, էջ 256)

Պ.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԵԹՈԴԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ ԳՐԱԲԱՐԻ
ՔՆՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

1. - Բան (Նախադասութիւն)

Հետեւելով նախորդ շրջանի քերականներին՝ Սերաստացին այս բաժնի սկզբում տալիս է նախադասութեան սահմանումը: Ըստ Արքաճոր՝ այդ բաժինը քերականութեան «պատուականագոյն» մասն է կազմում, ուստի ուսուցողներն եւ ուսուցողները պէտք է խմանան, որ «Բանն է շարամանութիւն բառից յայտնող տրամախոսութեան մտաց մարդոյ» այսինքն՝ բառերի այնպիսի կապակցութիւնը, որը յայտնում է մարդու մտքի դատողութիւնը, կոչւում է բան³³:

Ինչպէս Սերաստացու, այնպէս էլ նրա նախորդների մօտ, բան (խօսք) եւ նախադասութիւն հասկացութիւնները միմեանցից չեն տարբերակուած, այլ նոյնացուած են: Զարգացնելով ու պարզաբանելով Արիստոտէլի միտքն այս հարցի կապակցութեամբ՝ Սերաստացին միանգամայն իրաւացի կերպով զգուշացնում է, որ բանն այն ժամանակ կարող է միտք յայտնել, երբ բառերը շարադասուում եւ կապակցւում են եւ յատուկ կարգով, որոշակի կանոններով: «Բան յայնժամ լի-

նի - զրում է նա - յորժամ այնպիսեաւ կարգաւ շարադրին եւ շարամանին բառքն՝ զի կարիցեն զներքին դատումն մըտաց մարդոյն արտայայտել»³⁴: Այս միտքը հաստատելու համար՝ նա բերում է բառերի խառն, անկանոն այնպիսի շրջապակցութիւն, երբ այդ բառերը որեւէ միտք չեն արտայայտում, քանի որ «ոչ բաղկացուցանեն զբան»: Օրինակ՝ «լըւաւ կարաց որ ուսաւ եւ ոչ կամ կամեցաւ եւ ոչ կամ ոչ»: «Ահա այսօրիկ - զրում է քերականը - բառք են նոյնք ընդ վերոնդելոց բառից, սակայն աստէն վասն անկարգութեան շարիցն՝ զոչ իմն բան նշանակեն, որք ի վեր անդրվասն բարւոք կարգաւորմանն նշանակեն»³⁵: Հաւանակ սրան, քերականը կատարում է նոյն բառերի վերադասաւորում, այնպիսի շարադասութեամբ, երբ նոյն բառերի կապակցութիւնն արդէն միտք է արտայայտում, այսպէս՝ «Որ լուաւ, եւ ոչ ուսաւ, կամ ոչ կարաց, եւ կամ ոչ կամեցաւ»:

Բառերի կապակցութեան ու շարադասութեան այս եղանակը, որը ճիշտ է եւ գիտական, մանկավարժական ու մեթոդական տեսակէտից ընդունելի, ընդօրինակւում է հետագայ բոլոր քերականների կողմից, սկսած Հ. Մ. Չամչեանից, մին-

չեւ մեր օրերի բոլոր հեղինակները՝ նախադասութիւնն ու բառերի կապակցութիւնը բացատրելիս: «Շարամանել» եւ «շարադրել» եղբները նոյնպէս օգտագործւում են զրարարի հետագայ քերականների կողմից:

Ենթելով հայոց լեզուի շարահիւսական իրողութիւնների փաստական վիճակից՝ Արքաճորը ճանաչում է բանի (այն է՝ նախադասութեան) երկու տեսակ՝ կատարեալ եւ անկատար: Ըստ հեղինակին՝ կատարեալ է կոչւում զեղչուած անգամ չունեցող նախադասութիւնը: Երբ մէկը (զրողը կամ խօսողը) որեւէ միտք է արտայայտում որեւէ իրի կամ երեւոյթի մասին այնպէս, որ լսողը կամ կարդացողը առանց թերութեան լիովին հասկանում է նրա արտայայտածը տուեալ իրի կամ երեւոյթի մասին, իմանում է նրա մտքի դատողութիւնը, նրա վերաբերմունքը զէպի այս կամ այն իրն ու երեւոյթը, եւ չի սպասում նոր, լրացուցիչ բառերի, չենց այդպիսի բանը կոչւում է կատարեալ: Այսօրուայ ըմբռնմամբ՝ լիակատար, անթերի նախադասութիւնն է: «Կատարեալ բանն է - զրում է հեղինակը - որ այնպէս շարամանի ի բազմաց բառից, զի գրողը դիտաւորութիւն մտաց արտայայտիցէ, որով միտ լսողին հանգչիցի եւ ոչ սպասիցէ այլոց բառից. որգոն, Անվարժն՝ որ ոչ երբեք լսէ խրատու, ոչ երբեք վարժի: Ահա այս է բան կատարեալ, զի ի սմին միտ լսողին հանգչի, եւ ոչ սպասէ այլում բառի»³⁶:

Ընդհակառակն, այն նախադասութիւնը, որի մէջ զեղչուած անգամ կամ անգամներ կան եւ լսողը կամ կարդացողը թէպէտեւ հասկանում է արտայայտուած ընդհանուր միտքը, սակայն այդ միտքը լիովին հասկանալու համար՝ նոր պարզարանող բառերի կարիք է զգում, անուանում է «անկատար բան»: Իսկ անկատար բանն է - զրում է նա - որ թէպէտ շարամանի ի բազմաց բառից բարւոք կարգաւ, եւ նշանակէ տրամախոսութիւն ինչ մտաց, բայց անկատարապէս, ուստի եւ զմիտ լսողին թէպէտ զարթուցանէ առ-

ի հասկանալ զիմն, բայց ոչ հանդուցանէ, որդոն՝ քէպէտ յոյժ բազումք են՝ որք կամին զբարին: Ահա այս է բան անկատար եւ պահանջէ նաեւ զայլս բառս՝ որովք կատարիցի, որդոն՝ բայց յոյժ սակաւք են՝ որք որպէս պարտ է կամիլ՝ կամիցին»³⁷:

Այսպիսով, ըստ հեղինակի, բերուած անկատար կամ թերի նախադասութիւնը կատարեալ կարող է դառնալ՝ զեղչուած, բայց թողնուած բառերը վերականգնելու զէպքում: Սա արդի ըմբռնմամբ՝ թերի նախադասութիւնն է:

2. - Խօսքի տեսակները

Սերաստացին լայն առումով խօսքն՝ ըստ բովանդակութեան, կառուցուածքի, շարադասութեան եւ ոճի, բաժանում է երեք հիմնական խմբի. գիւրհասկանալի, միջակաւոր եւ կատարելապէս:

Դիւրիմասկանալի է համարում խօսքի այն տեսակը, երբ զրողը ընտիր բառեր ու ոճեր չառ չի գործածում, եւ զրուածքն ըստ իր լեզուական ատուղծի ու արտայայտչական ձեւերի՝ բոլորի համար մատչելի է. առանց զժուարութեան ամէնքն էլ հասկանում են այն: Այս կարգի զըրուածքների թուին է դասում Յայսմաւուրը:

Միջակաւորը այն խօսքն է, երբ հեղինակը ընտիր բառեր, զարճուածքներ ու ոճեր է բանեցնում, զրուածքը համեմունք է քաղցրարանութեամբ, ըստ որում՝ այն այնքան էլ մատչելի չէ բոլորին, յատկապէս հասարակ ընթերցողին: Այս տեսակի զրուածքների կարգին է դասում Աստուածաշունչը:

Կատարելապէս (այսինքն՝ կատարեալ) զրուածք է համարում այնպիսիները, որոնց բառադանձր, ոճերն ու զարճուածքները ընտրուած են, քաղցրախօս են, սակայն հասկանալի են ոչ բոլորին: Այս կարգի զըրծերը հասանելի են միայն սակաւթիւ մարդկանց, այսինքն՝ գիտուն-

33. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 228:

34. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում:

35. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում:

36. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում:

37. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 229:

ներին: Այս կարգին է դասում Մովսէս Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ներսէս Կլայեցու, Ներսէս Լամբրոնացու եւ ուրիշները ստեղծագործութիւնները:

Խօսքի այս տեսակներն աւելի ըմբռնելի դարձնելու համար՝ քերականը վերը նշուած հեղինակների գործերից հատուածաբար համապատասխան նմոյշներ է բերում:

Խօսքի այսպիսի ստորաբաժանման (ըստ նիւթի դժուարութեան, ըստ լեզուի եւ ուրիշ խթնութեան) չենք հանդիպում Սեբաստացու նախորդների երկասիրութիւններում: Ընդհակառակն, հետագայ շրջանի գրաբարի բոլոր քերականները, «Շարադրութիւն» վերնագրի տակ, օգտագործում են Մխիթար Սեբաստացու վերոյիշեալ դասակարգումը, սակայն որոշ վերախմբադրումով:

3. - Նախադասութեան բնոյթը

Հայ քերականութեան մէջ առ այսօր դեռ հանգամանորէն չի ուսումնասիրուած շարահիւսութեան համակարգի մէջ մշտնօր կարեւոր հարցերից մէկը՝ նախադասութիւնների դասակարգումն ըստ բնոյթի:

Ի՞նչն է պատճառը. մեր լեզուի մէջ շարահիւսական այդ իրողութիւնը չկա՞ր, թէ մի այլ բան: Ծիշտո ասած՝ մեր կենդանի լեզուի մէջ դեռեւս շատ վաղուց, բանահիւսութեան շրջանից սկսած, առկայ էր պատմողական, հարցական, բացազանչական, ըզձական եւ հրամայական բնոյթի նախադասութեան հասկացութիւնը: Բանն այն է, որ շարահիւսական այդ իրողութիւնը դեռեւս չէր արձանագործուած յոյն քերականի երկասիրութեան մէջ. իսկ հայ մեկնիչները շատ հարցերում հետեւել էին այդ աշխատութեանը: Նախքան հայ գրաւոր լեզուի քերականութեան ձեւաւորումը, հին աշխարհի փիլիսոփաներն իրենց փիլիսոփայական եւ տրամաբանական բնոյթի աշխատութիւններում՝ մտածողութեան եւ տրամաբանութեան հարցերին զուգընթաց՝ քննու-

թեան են առել նաեւ շարահիւսութեանն առնչուող հարցերը, այդ թւում նաեւ նախադասութեան բնոյթի հարցը. թերեւս այս է պատճառը, որ «Շարահիւսական շատ եղբայր ու հասկացութիւններ (նախադասութիւն, ենթակայ, ստորոգեալ, որոշիչ եւ այլն) առաջին անգամ եւ յատուած ձեւով օգտագործուել են փիլիսոփայական ու տրամաբանական բնոյթի աշխատութիւններում»³⁸:

Նախադասութեան բնոյթի հասկացութեանը (սակայն առանց եղբի) հայ քերականագիրութեան պատմութեան մէջ առաջին անգամ անդրադարձել է Դաւիթ քերականը (Ե. դար), իսկ 12-13 դար յետոյ այդ հարցը շօշափել են Ս. Զուղաթեցին (1640-1650 թթ.) եւ Յ. Կոստանդնուպոլսեցին (1674 թ.):

Ըստ Ս. Զուղաթեցու՝ նախադասութիւնները լինում են բացերեւակայական, հրամայողական, ըզձական, ստորադասական եւ հարցական. իսկ ըստ Յ. Կոստանդնուպոլսեցու՝ պատմողական (կամ՝ ցուցական), իշխողական, հայցողական, յանդիմանական (կամ՝ բացայայտական):

Օգտագործելով հայ քերականագիրական մտքի կուտակած հարուստ փաստերը եւ կենդանի լեզուի իրողութիւնները՝ Ս. Սեբաստացին աւելի է ճշգրտում ու զարգացնում շարահիւսութեանը վերաբերող բազմաթիւ հարցերն ու դրանց սահմանումները: Բացի կատարեալ եւ անկատար նախադասութիւններից, Սեբաստացին «բան»-ը (նախադասութիւնը) բաժանում է եւս հինգ նոր տեսակի՝ Դարձեալ զիտելի է դրում է նա զի բանից ոմանք են Սահմանական, ոմանք Հրամայական, ոմանք Ըզձական, ոմանք Անբացարձգ³⁹:

Ըստ էութեան քննելով Սեբաստացու բնորոշումները եւ բերումը օրինակները, սրանցից իւրաքանչիւրի մասին՝ ի պատիւ նրա պէտք է ասենք, որ հայ քերականա-

38. Լ. ԽԱՉԱՆԻԱՆ, նոյն տեղում (տե՛ս ծանօթ. թիւ 1):

39. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 229:

գիտութեան մէջ Սեբաստացին առաջիններից մէկն է, որ այժմեան հասկացութեամբ նախադասութիւնները բաժանում է ըստ բնոյթի, սակայն առանց եղբայրների գործածութեան. բերենք մի քանի փաստ:

ա) «Սահմանականք են այնքիւ - դրում է նա - որով բացորոշաբար զիր ինչի մէջն, կամ զայլոց ասեմք ընդ ժամանակաւ ներկայիւ, անցելով, եւ կամ անցելով. օրինակ՝ Տեսի քեզ ընդ աջմէ կզրոր քոյ: Եղբայր քո ուսանի զսոնարհութիւն»⁴⁰:

Ինչպէս նկատում ենք, ըստ Սեբաստացու՝ սահմանական են կոչւում այն նախադասութիւնները, որոնք պատմողաբար որեւէ միտք են արտայայտում՝ ներկայ, անցեալ կամ ապագայի ժամանակներին բայերի գործածութեամբ: Տարբերութիւնը միայն այն է, որ աշխարհաբար չըջանի քերականները՝ սահմանականի փոխարէն, գործածել են պատմական (Ս. Պալասանեան) եւ պատմողական (Գ. Սեւակ) եղբայրները, այս դէպքում օգտուելով Յ. Կոստանդնուպոլսեցու եղբից, որը գործածել է 1674 թուականին:

«Հինգերորդ գիտելի է - դրում է Կոստանդնուպոլսեցին - զի յորժամ խորհիմք գնեարարադրեցիւ բանէ, պարտիմք գգուշապէս դիտել եւ իմանալ, քէ այն ինչ՝ գորիմք խորհիմք բան, իցէ պատմողական կամ ցուցական, պարտիմք արտադրել (արտասանել կամ գրել) գնոյն սահմանականաւ»⁴¹:

բ) Հրամայական բնոյթի նախադասութեան մեկնութիւնը, մեր կարծիքով, աւելի լրիւ ու ճիշտ է Սեբաստացու մօտ: Նա գործածում է հրամայական եղբը, որը հետագայում նոյնութեամբ եւ առանց փոփոխութեան՝ մտնում է հայ քերականագիրութեան մէջ: Բացի այս, նա հրամայականի մէջ զիտում է, ինչպէս հրամանն ու սատուումը, կարգադրութիւնն ու արգելումը, այնպէս էլ յորդորները, խնդրանքը, խրախոյսը: Կոստանդնուպոլսեցին հրամայականին անուանում է

իշխողական, եւ բացատրում է որ այդպիսի նախադասութիւնները պէտք է արտաբերել կամ գրել հրամայական նախադասութիւններով. մինչդեռ Սեբաստացին այդ առթիւ դրում է. «Հրամայականք են այնքիւ, որովք զիր ինչ այլոց հրամայեմք, եւ կամ զիր ինչ՝ յայլոց աղաչելով՝ խնդրեմք ընդ ժամանակաւ ներկայիւ կամ ապագայիւ. օրինակ՝ Արա՛ւ ըզքեզ խոնարհ: Սիրես՞ ի՛ր եւ զընկերդ»:

Բերենք օրինակներ.

Մի՛ եղանիր, մի՛ եղանիք, մի՛ եղանիցին, եղի՛ր (կամ՝ եղիցի՛ս), մի՛ եղանիցիս, եղիցի՛ւք, եղի՛րք, մի՛ եղանիցիք եւ այլն⁴²: Սեբաստացին իր գրքում բերում է հրամայական նախադասութիւնների բազմաթիւ օրինակներ: Կարեւորն այն է, որ նա մի՛ արդեւական մասնիկի եւ հրաման արտայայտող բայերի վրայ կանոնաւոր կերպով եւ հետեւողականօրէն դնում է շեշտերը: Այս սկզբունքն էլ նոյնութեամբ որդեգրում են մեր հետագայի քերականները:

Համեմատելով եւ զուգադրելով արդի բնորոշումների հետ՝ նկատում ենք, որ հրամայականի վերաբերեալ Սեբաստացու բնորոշումը լիովին համընկնում է մեր ժամանակների բնորոշմամբ եւ գրեթէ նոյնութեամբ էլ մտել է հայ քերականագիրութեան մէջ որպէս կայուն եղբ:

գ) Սեբաստացու մօտ ըզձական են համարուել այն նախադասութիւնները «ուարուել այն նախադասութիւնները՝ որով զիզ սրտի մերոյ առ իմն ընդ ժամանակաւ ներկայիւ կամ անցելով բացայայտեմք. օրինակ՝ Երանի՛ր թէ՛ նախապէս ուսեալ իցէ՛ր զսոնարհութիւն»⁴³:

Յաւօք, հետագայ քերականները նախադասութեան այս բնոյթը դուրս են դրեցել: Սեբաստացին թէական «բան»-ը համարում է պայմանի պարագայով կապմունքով ստորադասական նախադաս-

40. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում:

41. Յ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԵՅԻ, նոյն տեղում, (տե՛ս ծանօթ. թիւ 8) էջ 188:

42. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 45:

43. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 229:

սուբիւնը. այսպէս՝ «Եթէ պահիցես ըզպատուիրանս տեսան, մտանես ի կեանս: Եթէ ողորմեալ իցէիր աղքատաց, դտեալ էիր եւ դու զողորմութիւն»:

Նկատի ունենալով քերականի բերած օրինակները՝ կարող ենք ասել, որ «անբացորոշ բանք» արդի ըմբռնմամբ պայմանի պարագայ երկրորդականով կազմուած բարդ ստորոգյաական նախադասութիւնն է:

դ) Ըստ Սերաստացու, «Բէականի» են այն նախադասութիւնները, որոնք թէպէտ իրենք իրենց միշտ անկատար են, սակայն կարող են կատարեալ դառնալ, երբ յարակցուեն սահմանական կամ հրամայական բնոյթի նախադասութիւններին հետ: «Թէականք բանք են այնքիւ՝ զրում է Արբաշայրը՝ որք յիւրեանս ինքեանս թէպէտ միշտ են անկատարք, սակայն կատարին, մինչ նոցունց առակցին այլք բանք սահմանականք կամ հրամայականք»: Եւ բերում է այսպիսի օրինակ. «Եթէ պահիցես զպատուիրանս տեսան, մտանես ի կեանս»: Կամ՝ «Եթէ ողորմեալ իցէիր աղքատաց, դտեալ էիր եւ դու զողորմութիւն»:

Ինչպէս տեսնում ենք, Սերաստացին պայմանի պարագայով արտայայտուած ստորադասական նախադասութիւնները համարում է թէական (թերի) նախադասութիւններ, որոնք, առանձին վերցրած, իրենց իրենցով կատարեալ, անթերի միտք չեն կարող արտայայտել. բայց երբ այդպիսի բնոյթի նախադասութիւնները խօսքի մէջ միանում, կապակցուած են սահմանական կամ հրամայական բնոյթի նախադասութիւններին հետ, այդ դէպքում դառնում են անթերի, կատարեալ նախադասութիւններ:

Փաստը ցոյց է տալիս, որ Սերաստացին նախադասութիւններն ըստ բնոյթի եւ ըստ կազմութեան ու կառուցուածքի չի տարբերակել, այլ նոյնացրել է. մինչդեռ նրանց շարահիւսական հիմունքները միանգամայն տարբեր են:

ե) Նախադասութեան յաջորդ բնոյթը,

որ մեկնարանում է Արբաշայրը, «անբացորոշ» է: Քերականը անբացորոշ է համարում այնպիսի նախադասութիւնները, որովք զիմն առանց բացորոշման զիմաց եւ ժամանակի ասեմք» օրինակ՝ «սիրելի Սատուած, պատուելի զծնողս, հնազանդ իլ մեծաւորաց»⁴⁴:

Արդի ըմբռնմամբ սա էլ անդէմ նախադասութիւնն է: Չնայած անուանումների տարբերութեանը, Սերաստացու մօտ էլ ըստ իմաստի նոյնն է հասկացում: Այս կարգի նախադասութիւնները ոչ թէ բնոյթ հասկացութեան մէջ պէտք է զետեղուին, այլ ճանաչուէին ըստ կազմութեան, կամ որեւէ այլ յատկանիշի:

Եզրակացութիւն: Բնոյթ հասկացութեան մէջ մտցրած (Սերաստացու) նախադասութիւններից երեքը՝ սահմանականք, հրամայականք եւ ըզձականք նոյնութեամբ, որպէս շարահիւսական եզրրանք, օգտագործւում են հետագայ քերականների աշխատութիւններում: ԺԹ. դարից յետոյ ըզձականք հանում է բնոյթ հասկացութիւնից, իսկ առաջին երկուսը մնում եւ իրենց զոյութիւնը շարունակում են առ այսօր: Ինչ վերաբերում է եզրներին, ապա սահմանական եզրը հետագայում փոխարինւում է պատմողականով:

Ճիշտ է, Սերաստացին շարահիւսութեան բաժնում հարցական նախադասութեանը չի անդրադարձել, սակայն նշում երկտարբերութեան մէջ՝ նա այդ մասին իր խօսքն է ասել:

Չեւարանութեան բաժնում, յատկապէս ըզձական բայերի մասին խօսելիս, նա ճանաչում է հարցական նախադասութեան բնոյթը: Այսպէս՝ «Երանի՞ թէ եղեալ իցեմ, երանի՞ թէ եղեալ իցեմք, երանի՞ թէ եղեալ իցէի, երանի՞ թէ ասիցեմք, երանի՞ թէ ասիցէի, երանի՞ թէ ասիցէաք, երանի՞ թէ ասացեալ իցեմ, երանի՞ թէ ասացեալ իցեմք» եւ այլն⁴⁵:

44. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 230:

45. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 45:

Այս բաժինն սպառնում է յետոյ՝ հեղինակին անդրադառնում է անուան (դոյական, ածական, թուական), պարագաների (թիւ, տեսակ, սեռ, հոլով...), դերանուն, բայի, խոնարհման, ընդունելութեան, նախադրութեան, մակերայի եւ չաղկապի հարցերին:

Երրորդ գլուխը, որը դարձեալ նուիրում է շարահիւսութեանը, ինչպէս ասել ենք, կոչւում է «Յաղագս շարայարութեան մասանց բանին եւ կիրառութեանց նոցին»: «Յաղագս չորից սեռից համաձայնութեանց մասանց բանի ի հասարակի» ենթադրւում է (էջ 369): Սա փաստօրէն շարահիւսութեան այն բաժինն է, որին այժմ անուանում ենք «համաձայնութիւն»:

4. - Միջանկեալ նախադասութիւն

Միջանկեալ նախադասութեան հասկացութիւնը որպէս շարահիւսական առանձին միաւոր, անշուշտ, զոյութիւն է ունեցել մեր վաղ շրջանի գրաւոր խօսքի մէջ. սակայն իրրեւ նախադասութեան առանձին տեսակ չի ճանաչուել ու միւս նախադասութիւններից չի տարբերակուել: Նախորդ քերականների մշակած ընդհանուր կարգից չէզոքելու եւ ստեղծուած դարաւոր աւանդութիւնն ու սովորութիւնն ու սովորութիւնը չխախտելու համար՝ Մխիթար Սերաստացին եւս նախադասութեան այդ տեսակին անդրադառնում է մասնակի կարգով, երկրորդաբար. սակայն ինքն իր սեփական գրաւոր խօսքի մէջ զործածում է այդպիսի նախադասութիւններ եւ դրանք միւս նախադասութիւններից տրոհում է փակագծերով: Բացի այս, կէտադրական նշանների մասին խօսելիս, Սերաստացին նշում է նաեւ փակագծերը (փարենթազիլ): Հետաքրքրական է քերականի կարծիքը կէտադրական նշանների դերի մասին: Այդ մասին քերականը գրում է. «Ենթադասութիւնն ի ձեռն տրոհման բանից է, որով վերծանողն ի ձեռն չնշառութեանց տրոհէ գրանն՝ մերթ անկատարաբար, մերթ

կատարեալապէս, եւ մերթ վերջացուցանողականաբար... Եւ առ նշանակութիւն առաջելոցս հնարեցեալք են ոմանք զիծք, որք ասին ստորակէտ, միջակէտ, վերջակէտ, փարենթազիլ (փակագիծ) եւ ենթամաս»⁴⁶:

Սերաստացին առաջին հայ քերականն է, որ քերականութեան մէջ խօսում է մակակէտի եւ փակագծերի մասին:

Սակայն պէտք է ասել, որ գրաւոր խօսքի մէջ միջանկեալ նախադասութիւնների կիրառութեան հարցում՝ առաջնութիւնը պատկանում է Ոսկան Երեւանցուն: Նա իր տպագրած «Աստուածաշունչ»-ի մէջ՝ բաղմամբ միջանկեալ նախադասութիւններ է դործածել. սակայն քերականութեան գրքում այդ մասին ոչ մի խօսք չի ասել: Սերաստացին միջանկեալ է դարձրել այնպիսի երկրորդական նախադասութիւններ, որոնք տուեալ բարդ նախադասութեան կազմում ընդհանուր մտքի հետ սերտորէն ու անմիջապէս չեն կապուած, այլ մասնակի կարգով: Բերենք երկու օրինակ.

ա) «Եւ զի (որպէս յայտ է ամենից) յազգի մերում առ ներկայս ոչ զոյր տըպադրեցեալ լիակատար բառարան՝ յորում բնաւք բառք մերոյս լեզուի ոչ միայն ըստ յատկականաց նշանակութեանց իւրեանց, այլ նաեւ ըստ սեփականաց հոլովմանց, բացատրեցեալք առաջի աչաց համարակողունից զնիցէին...» (էջ 3):

բ) «Եւ եթէ հաճեսցի տէր շնորհել մերոյս լեզուի (որ ունի զմեծ փարթամութիւն բառից) նաեւ զօրինաւոր եւ զլիակատար բառարան տպագրեցեալ, յայնժամ առաւելագոյն զիւրանայ ամենից ուսումն զբարաւոր լեզուի մերոյ, եւ ընտանի հասկացումն զբոց սրբոց, եւ զըրուածոց արտաքնոց»⁴⁷:

Առաջին նախադասութեան մէջ գործածուած միջանկեալ նախադասութիւնը՝ իսկական միջանկեալ է, եւ ամբողջ մտքի

46. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 488:

47. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 3:

հետ երանգային մասնաւոր կապ ունի, չեւտում է տպագրական բառարան չլինելու փաստը եւ նշում՝ որ դա ամէնքին է յայտնի, եւ ոչ թէ լուի իր անձնական կարծիքն է: Երկրորդ նախադասութեան մէջ մտած միջանկեալը արդէն այլ բնոյթի է, եւ բոլորովին այլ դեր ու նշանակութիւն ունի: Այդ միջանկեալը՝ երկրորդական նախադասութիւն է եւ, չնայած իր դործածութեանը, պարզաբանում է երկրորդական անդամներից մէկի՝ լեզուի այլեւայլ հանգամանքները. հետեւապէս շարահիւսօրէն կապում է ընդհանուր բարդ նախադասութեան հետ: Այս միջանկեալը կարելի է արտայայտել նաեւ երկրորդական, լրացում նախադասութեան ձեւով, եւ փակագծերի փոխարէն՝ նախադասութեան միւս անդամներից այն տրոհել ըստորակէտերով: Այս դէպքը հետագայ շրջանում չի կրկնում եւ նման տիպի նախադասութիւնները գործածւում են բարդ ստորադասականի ձեւով («Եւ եթէ հաճեսցի տէր շնորհել մերոյս լեզուի, որ ունի զմեծ փարթամութիւն բառից, նաեւ զօրինաւոր եւ զլիակատար բառարան տըպագրեցեալ, յայնժամ առաւելագոյն դիւրանայ ամենից ուսումն դրարառի լեզուի մերոյ»): Փաստը ցոյց է տալիս, որ կենդանի խօսքի մէջ արդէն ձեւաւորում էին բարդ նախադասութեան բաղմաթիւ տարատեսակներ, բայց քերականները դեռեւս չէին խիզախում խախտելու գոյութիւն ունեցող աւանդութիւնը, եւ նախադասութեան այդ տեսակը մտցնելու քերականական դասադրքերում: Լեզուի անընդհատ փոփոխումն ու զարգացումը,

շարահիւստական առանձին միաւորների օրինաչափութիւնների ձեւաւորումը՝ Սերաստացուն ստիպում են հաշուի առնել առկայ փաստերը եւ միջանկեալ նախադասութիւնը դիտել որպէս նախադասութեան առանձին տեսակ: Միջանկեալ նախադասութեան կէտադրութեան հարցում էլ Սերաստացին ցուցաբերել է զարմանալի ճկունութիւն եւ ուրոյն սկզբունք, որը համընկնում է այսօրուայ սկզբունքներին:

Սերաստացին միջանկեալ նախադասութիւնը դրել է փոքրատառով եւ վերջում ոչ մի կէտ չի դրել, նկատի ունենալով ընդհանուր նախադասութեան կէտադրութիւնը: Նա միջանկեալի կէտադրութիւնը համարել է փակագծերը: Արդի քերականները, այսօր, միջանկեալը գործածում են ճիշտ այն սկզբունքով, ինչ մըշակել է Սերաստացին:

Ի դէպ, պէտք է ասենք, որ Արքահօրից յետոյ շատ քերականներ վերջին փակագծից առաջ, այսինքն՝ միջանկեալ նախադասութիւնից յետոյ դնում են վերջակէտ, եւ այդ կարգի նախադասութիւնները սկսում են մեծատառով: Այս տեսակէտը մերժուել է եւ պահպանուել է Սերաստացու տեսակէտը: Այս հարցում եւս Սերաստացին դառնում է առաջին կիրառողը: Հետագայ քերականները, զարգացնելով այս գիւտը, տալիս են միջանկեալ նախադասութեան սահմանումը:

(Շար. 4)

ՅԱԿՈԲ Մ. ՄԻՆԹԱՐԵԱՆ
(Դասախօս, Երեւան)

ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՂԱԼԱԹԻՈՅ Ա. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կազմեց՝ Հ. ԱՐՍԷՆ Ղ. ՂԱԶԻԿԵԱՆ

Տարիներ առաջ, Կ. Պոլսէն դնած էի զանազան զրութեանց եւ ձեռագիր տետրակներու դէպ մը, որուն մէջ վաստակաւոր եւ բազմարդիւն Վենետիկեան Մըխիթարեան մեր շատ սիրելի Հայր Արսէն Ղազիկեանի կողմէ կազմուած՝ Ղալաթիոյ Ձեռագրաց ցուցակը գտնելու ուրախութիւնն ունեցայ:

Ղալաթիոյ հնագրեան Ս. Լուսաւորչի եկեղեցին, ինչպէս ծանօթ է, ասկէ քանի մը տարիներ առաջ՝ Կ. Պոլսոյ նոր բացուելիք ճանապարհներու ցանցին պատճառով՝ ի հիմանց քանդուեցաւ, որուն տեղ՝ հայ հին ճարտարապետութեան հետեւութեամբ նոր տաճար մը շինուեցաւ: Հին եկեղեցւոյն մեծաթիւ եւ արժէքաւոր կուտինահայ յախճապակեայ սալիկներէն, որոնք եկեղեցւոյն ներքին որմերը կը զարդարէին, յայտնի չէ թէ ինչ փրկուած է: Եկեղեցւոյն մէջ կը պահուէին արժէքաւոր եւ չահեկան ձեռագիրներ, որոնք կ'երեւի թէ ժամանակ մը մինչեւ 61 թուահամար ունեցած են եւ դուցէ աւելի ալ եղած են: Ասկէ տասնեակ մը տարիներ առաջ, առիթ ունեցայ եղածները տեսնելու, որոնք հաղիւ 15 հատ մը կային, թիթեղեայ տուփերու մէջ փակուած. բան մը՝ որ կրնար զանոնք մոխրացնել ու փրճացնել, օդի պակասութեան եւ խոնավութեան պատճառով, ճիշտ ինչպէս որ պատահեցաւ երկու արժէքաւոր ձեռագիրներու՝ որոնք կը պատկանէին Աղեքսանդրիոյ (Եղիպտոսի) Հայոց եկեղեցւոյն:

Տետրակը՝ բաց վարդագոյն հասարակ թղթեայ կազմով, 15,5×19,5 հրդմ. մեծութեամբ, կապտագիծ քառակուսիներով՝ ճերմակ թուղթ, 41 թերթերէ կը

բաղկանայ, որուն 24թ-էն անդին բոլորովին պարապ: Գրչութիւնը՝ սեւ մելանով, մանրագիր: Իւրաքանչիւր թերթի երկրորդ էջը պարապ է թողուած:

Արտաքին կողքին վրայ՝ գրչէն իսկ «Ս. Լուսաւորչի Եկեղեցւոյ Ձեռագիրներու Ցուցակ, կազմուած՝ Հայր Արսէն Ղալաթիոյ կողմէ, 5 յուլիս 1920»:

Էջ 1ա. տիտղոսաթերթը՝ գրչէն.

Ցուցակ
Ձեռագրաց Մատենից
Գտնելոց
յեկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի
Լուսաւորչի
որ
Ի Կալաթա Կ. Պոլսի
Յամի
1920
Կազմեալ
Ձեռամբ անպիտան եւ անարուեստ
Գրչի ուրումն
Բուսելոյ յախուսն Հանդիմ
Անդնդոց

Էջ 2ա. Ունի եռատող ենթախորագիր «Ցուցակ Ձեռագիր Մատենից Ս. Լուսաւորչի Եկեղեցւոյն»: Եւ կը սկսի ցուցակը:

«Կը պակսին թիւ 1, 2, 3, ձեռագիրները»:

Թիւ 4

Աւետարան քրթեայ. քուական չունի

Միջակ դերքով, երկիջեան, բոլորգիր, կանոնաւոր գրչութեամբ, իւրաքանչիւր աւետարանչի նկարներով: Մատթէոսինը կատարեալ է, իսկ միւսները պարզ կար-